Արձանագրություն N 1 - 09/20

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2020 թ.-ի սեպտեմբերի 7-ի նիստի

Ներկա էին՝ Թոքմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Առաքելյան Ա.Ա. (գ.գ.թ., դոցենտ), Ալեքսանյան Վ.Ա. (գ.գ.դ., դոցենտ), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Ավետիսյան Ս.Ա. (տ.գ.թ., դոցենտ), Հակոբյան Ռ.Ս. (ք.գ.թ.), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Ա.Մ., Շահբազյան Ա.Վ., Պողոսյան Ա.Ա., Բաղունց Գ.Ռ., Սայիյան Ռ.Գ., Ֆարսիյան Ն.Վ. (ք.գ.թ.), Մուսայելյան Վ.Ս., Ադամյան Ս.Ա., Սողոմոնյան Ա.Է., Մարտիրոսյան Մ.Վ., Բաբայան Ռ.Ս, Մեսրոպյան Ս.Ս., Առուշանյան Գ.Ա.:

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ), Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Ռ.Մ., ՄՄԿ կուրսղեկներ, «Մաթեմատիկա» առարկան դասավանդող դասախոսներ:

ՕՐԱԿԱՐԳ

1.Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 2020-2021 ուստարվա ուսումնական գործընթացի մասին:

2.Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ծրագիր-ժամանակացույցի մասին:

3.Այլ հարցեր:

Լսեցին 1 - Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 2020-2021 ուստարվա ուսումնական գործընթացի մասին (զեկուցող՝ Ռ.Հարությունյան):

Որոշեցին 1.1 - Ընդունել ի գիտություն 2020-2021 ուստարվա ուսումնական գործընթացի մասին ուսումնական աշխատանքների գծով ռեկտորի տեղակալ՝ Ռ.Հարությունյանի տեղեկատվությունը:

1.2 - Հաշվի առնելով համավարակի վտանգը 2020-2021 ուստարվա ուսումնական պարապմունքները (դասախոսություններ, լաբորատոր և գործնական պարապմունքներ) ժամանակավորապես կազմակերպել փոքր խմբերով, լսարանում ուսանողների միջև ապահովելով սահմանված տարածական մեկուսացում:

1.3 - Հանձնարարել ամբիոնների վարիչներին հաշվի առնելով համավարակի պայմաններում փոքր խմբերի ձևավորումների անհրաժեշտությունը, պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածությունների մեջ կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ուսումնական աշխատանքների գծով ռեկտորի տեղակալին՝ առաջիկա գիտխորհրդում հաստատելու համար:

Լսեցին 2 - Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ծրագիր-ժամանակացույցի մասին ներկայարեց որակի ապահովման բաժնի պետ՝ Ա.Սողոմոնյանը:

Որոշեցին 2 - Հավանություն տալ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ծրագիր-ժամանակացույցին և ներկայացնել ՈԱԱԿ:

Նախագահ՝ ստորագրություն Հ.Վ. Թոքմաջյան

Քարտուղար՝ ստորագրություն Ա.Ա. Առաքելյան